<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանկացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 7</p>	<p>Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում, 2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում, 3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում, 4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում, 5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, 6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում, 7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում, 8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում, 9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ»

Մոդուլի դասիչը	ԱՏԽ-5-20-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ մարդու օրգանիզմի անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, ատամնաձնոտային համակարգի անատոմիական կառուցվածքի և ատամնաձնոտային համակարգի ֆիզիոլոգիայի և բիոմեխանիկայի մասին և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի մարդու օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և ֆիզիոլոգիան, ոսկրաբանության և մկանաբանության առանձնահատկությունները, 2) ներկայացնի մարդու սիրտ-անոթային, շնչառական, միզասեռական և մարսողական համակարգերի անատոմիան և ֆիզիոլոգիան, 3) ներկայացնի մարդու նյարդային և ներզատիչ համակարգերի անատոմիան և ֆիզիոլոգիան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարդու օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և ֆիզիոլոգիան, ոսկրաբանության և մկանաբանության առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մարդու օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը, 2) ճիշտ է ներկայացնում կենսական օրգան-համակարգերի ֆիզիոլոգիան, 3) ճիշտ է ներկայացնում մարդու ոսկրային համակարգի կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում ուղեղային և դիմային գանգի ոսկրերը և միացումները, 5) ճիշտ է ներկայացնում մարդու մկանային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան,

	6) ճիշտ է ներկայացնում մարդու հողային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մարդու օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքի և ֆիզիոլոգիայի, ոսկրաբանության, գանգաբանության, մկանաբանության, հողաբանության վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին ըստ տարբերակների կհանձնարարվի մուլյաժների նկարների կամ պաստառների վրա ճիշտ նշել օրգան-համակարգերը, ոսկրերը, մկանները, հողերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - մարդու օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը, - կենսական օրգան-համակարգերի ֆիզիոլոգիան, - մարդու ոսկրային համակարգի կառուցվածքը, - ուղեղային և դիմային գանգի ոսկրերը և միացումները, - մարդու մկանային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, - մարդու հողային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, մարդու ընդհանուր անատոմիայի, ոսկրաբանության, հողաբանության և մկանաբանության վերաբերյալ պաստառներ, մուլյաժներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու սիրտ-անոթային, շնչառական, միզասեռական և մարսողական համակարգերի անատոմիան և ֆիզիոլոգիան
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մարդու սիրտ-անոթային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, 2) ճիշտ է ներկայացնում մարդու ավշային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, 3) ճիշտ է ներկայացնում մարդու շնչառական համակարգի կառուցվածքը և ֆիզիոլոգիան,

	<p>4) ճիշտ է ներկայացնում մարդու միզասեռական համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում մարդու մարսողական համակարգի կառուցվածքը,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում բերանի խոռոչի կառուցվածքը, ատամների դերը և ֆունկցիան մարսողական համակարգի նորմալ գործունեության համար,</p> <p>7) ճիշտ է բացատրում կաթնատամների և մնայուն ատամների ֆիզիոլոգիան,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում ատամնաձնոտային համակարգի բիոմեխանիկան:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մարդու սիրտ-անոթային, ավշային, շնչառական, միզասեռական և մարսողական համակարգերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի, կաթնատամների և մնայուն ատամների ֆիզիոլոգիայի, ատամնաձնոտային համակարգի բիոմեխանիկայի, արյան շրջանառության, գազափոխանակության վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ըստ տարբերակների կհանձնարարվի մուլյաժների, պաստառների վրա ճիշտ նշել սիրտ-անոթային, ավշային, շնչառական, միզասեռական և մարսողական համակարգերի օրգանները, դրանց կառուցվածքը և ֆիզիոլոգիան, բերանի խոռոչի կառուցվածքը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - մարդու սիրտ-անոթային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, - մարդու ավշային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, - մարդու շնչառական համակարգի կառուցվածքը և ֆիզիոլոգիան, - մարդու միզասեռական համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, - մարդու մարսողական համակարգի կառուցվածքը, - բերանի խոռոչի կառուցվածքը, ատամների դերը և ֆունկցիան մարսողական համակարգի նորմալ գործունեության համար, - կաթնատամների և մնայուն ատամների ֆիզիոլոգիան, - ատամնաձնոտային համակարգի բիոմեխանիկան: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, գրականություն, մարդու սիրտ-անոթային, ավշային, շնչառական, միզասեռական և մարսողական համակարգերի վերաբերյալ պաստառներ, մուլյաժներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մարդու նյարդային և ներզատիչ համակարգերի անատոմիան և ֆիզիոլոգիան
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մարդու նյարդային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, 2) ճիշտ է ներկայացնում մարդու ներզատիչ համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մարդու նյարդային և ներզատիչ համակարգերի վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի մուլյաժների կամ պաստառների վրա ճիշտ նշել նյարդային և ներզատիչ համակարգերի կառուցվածքը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ - մարդու նյարդային համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան, - մարդու ներզատիչ համակարգի անատոմիան և ֆիզիոլոգիան: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, գրականություն, մարդու նյարդային և ներզատիչ համակարգերի վերաբերյալ պաստառներ, մուլյաժներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՏԽ-5-20-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ստոմատոլոգիական հիվանդությունների վերաբերյալ անհրաժեշտ

	գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ::
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱՏԻ-5-20-004 «Ատամների ընդհանուր անատոմիա, ֆրոնտալ ատամների մասնավոր անատոմիա» մոդուլը:
Ուսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ստոմատոլոգիական գործիքները, նյութերը և անզգայացումը ստոմատոլոգիայում, 2) ներկայացնի ատամի կարծր հյուսվածքների հիվանդությունները, 3) ներկայացնի բերանի խոռոչի լորձաթաղանթի և պարոդոնտի հիվանդությունները և բուժումը, 4) ներկայացնի դեմքի և բերանի խոռոչի բորբոքային պրոցեսները, տրավմաները և նորագոյացությունները, 5) ներկայացնի բերանի խոռոչի անհատական հիգիենայի և պրոթեզավորման հետ կապված գործընթացների ժամանակ առաջացած հիվանդությունների կանխարգելումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ստոմատոլոգիական գործիքները, նյութերը և անզգայացումը ստոմատոլոգիայում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ստոմատոլոգիական գործիքները և վիրակապական նյութերը, 2) ճիշտ է ներկայացնում հիվանդի հետազոտման մեթոդները, զննումը, փաստաթղթերի ձևակերպումը, 3) ճիշտ է ներկայացնում ատամների բանաձևերը, 4) ճիշտ է ներկայացնում անզգայացումը ստոմատոլոգիայում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները ստոմատոլոգիական գործիքների և վիրակապական նյութերի, հիվանդի հետազոտման մեթոդների, ատամների բանաձևերի և անզգայացման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի ընտրել ստոմատոլոգիական գործիքները և վիրակապական նյութերը, նշել անզգայացման տեսակները, ճիշտ ձևակերպել փաստաթղթերը, գրել ատամների բանաձևերը:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ստոմատոլոգիական գործիքները, վիրակապական նյութերը, - հիվանդի հետազոտման մեթոդները, զննումը, փաստաթղթերի ձևակերպում, - ատամների բանաձևեր, - անզգայացումը ստոմատոլոգիայում: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նյութեր, գործիքներ, սարքավորումներ, ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսացրիչ, տեսանյութ, ստոմատոլոգիական գործիքներ, վիրակապական նյութեր, մուլյաժներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել ատամի կարծր հյուսվածքների հիվանդությունները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ատամի կարծր հյուսվածքների ոչ կարիոզ ախտահարումները, 2) ճիշտ է ներկայացնում կարիեսի էթիոլոգիան, ախտածնությունը, ախտորոշումը, բուժման և կանխարգելման մեթոդները, 3) ճիշտ է ներկայացնում պուլպիտը, 4) ճիշտ է ներկայացնում պարոդոնտիտը
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները կարիեսի, պուլպիտի, պարոդոնտիտի վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի մուլյաժների վրա տարբերակել կարիեսի փուլերը, գրաֆոլոգիական աղյուսակներով ներկայացնել սուր և խրոնիկ պուլպիտի, պերիոդոնտիտի, պարոդոնտիտի տարբերություններն ու նմանությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ատամի կարծր հյուսվածքների ոչ կարիոզ ախտահարումները,

	<ul style="list-style-type: none"> - կարիեսի էթիոլոգիան, ախտաճնությունը, ախտորոշումը, բուժման և կանխարգելման մեթոդները, - պուլպիտը, - պարոդոնտիտը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսագրիչ, տեսանյութ, մուլյաժ, պաստառ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել բերանի խոռոչի լորձաթաղանթի և պարոդոնտի հիվանդությունները և բուժումը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ստոմատիտը, դասակարգումը 2) ճիշտ է ներկայացնում խեյլիտը, 3) ճիշտ է ներկայացնում ալվեոլիտը, գինգիվիտը, 4) ճիշտ է ներկայացնում պարոդոնտոզը, 5) ճիշտ է ներկայացնում պերիկորոնարիտը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդությունների կլինիկայի և բուժման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի նկարներով տարբերակել ստոմատիտները խեյլիտներից, գինգիվիտները պարոդոնտոզներից:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ստոմատիտը, դասակարգումը - խեյլիտը, - ալվեոլիտը, գինգիվիտը, - պարոդոնտոզը, - պերիկորոնարիտը:

	Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նյութեր, գործիքներ, սարքավորումներ, ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսացրիչ, տեսանյութ, համապատասխան մասնագիտական գրականություն, նկարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել դեմքի և բերանի խոռոչի բորբոքային պրոցեսները, տրավմաները և նորագոյացությունները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պերիօստիտը, օստեոմիելիտը, դրանց տարբերակումը, 2) ճիշտ է ներկայացնում արսցեսն ու ֆլեգմոնան, դրանց տարբերակումը, 3) ճիշտ է ներկայացնում ծնոտի կոտրվածքների դասակարգումը, 4) ճիշտ է ներկայացնում ատամի հեռացման փուլերը, ցուցումներն ու հակացուցումները, 5) ճիշտ է ներկայացնում դիմաձնոտային շրջանի նորագոյացությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները դեմքի և բերանի խոռոչի բորբոքային պրոցեսների, կոտրվածքների դասակարգման, տրավմաների և նորագոյացությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի նկարներով տարբերակել ծնոտի կոտրվածքները, նորագոյացությունները, մուլյաժի վրա ներկայացնել ատամի հեռացման փուլերը, գրաֆուրգիական աղյուսակներով տարբերակել պերիօստիտն ու օստեոմիելիտը, արսցեսն ու ֆլեգմոնան:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - պերիօստիտը, օստեոմիելիտը, դրանց տարբերակումը, - արսցեսն ու ֆլեգմոնան, դրանց տարբերակումը, - ծնոտի կոտրվածքների դասակարգումը, - ատամի հեռացման փուլերը, ցուցումներն ու հակացուցումները, - դիմաձնոտային շրջանի նորագոյացությունները:

	Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսագրիչ, տեսանյութ, համապատասխան մասնագիտական գրականություն, ատամի հեռացման գործիքներ, նկարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Բերանի խոռոչի անհատական հիգիենայի և պրոթեզավորման հետ կապված գործընթացների ժամանակ առաջացած հիվանդությունների կանխարգելում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բերանի խոռոչի անհատական և ընդհանուր հիգիենան, 2) ճիշտ է ներկայացնում ոչ պատշաճ պրոթեզավորման և հնարավոր ալերգիկ ռեակցիաների հետևանքով բերանի խոռոչի հիվանդությունների առաջացումը, դրանց կանխարգելման սկզբունքները, 3) ճիշտ է ներկայացնում պրոթեզավորման հետևանքով առաջացած բերանի խոռոչի հիվանդությունները և կատարում դրանց կանխարգելման աշխատանքներ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր բերանի խոռոչի անհատական հիգիենայի, պրոթեզավորման հետ կապված գործընթացների ժամանակ առաջացած հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի մուլյաժների վրա ցույց տալ բերանի խոռոչի հիգիենայի կազմակերպումը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - բերանի խոռոչի անհատական և ընդհանուր հիգիենա, - ոչ պատշաճ պրոթեզավորման և հնարավոր ալերգիկ ռեակցիաների հետևանքով բերանի խոռոչի հիվանդությունների առաջացումը, դրանց կանխարգելման սկզբունքները, - պրոթեզավորման հետևանքով առաջացած բերանի խոռոչի հիվանդությունները և դրանց կանխարգելումը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել</p>

	հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսագրիչ, տեսանյութ, մուլյաժներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՏԽ-5-20-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ատամնատեխնիկության բնագավառում կիրառվող նյութերի դասակարգման, նրանց հատկությունների (ֆիզիկական, քիմիական, մեխանիկական, տեխնոլոգիական), կիրառման, նյութերի ծախսման չափերի մասին անհրաժեշտ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 54 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի ատամնատեխնիկական նյութերի դասակարգումը, հատկությունները, ծախսման չափերը, աշխատատեղի կառուցվածքը, աշխատանքային անվտանգության կանոնները, 2) ներկայացնի դրոշմանյութերի տեսակները, դասակարգումը, նրանց ներկայացվող պահանջները և կիրառությունը, 3) ներկայացնի դրոշմը, դրոշմագդալը, մոդելը, դրանց տեսակները, 4) ներկայացնի օժանդակ նյութերը, տեսակները, հատկությունները, կիրառումը, 5) ներկայացնել պլաստմասաները, տեսակները, կիրառումը, դրանց ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա, 6) ներկայացնի մետաղական համաձուլվածքները, տեսակները, դրանց ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա: Ճենապակու (կերամիկայի) տեսակները, կիրառումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ատամնատեխնիկական նյութերի դասակարգումը, հատկությունները, ծախսման չափերը, աշխատատեղի կառուցվածքը, աշխատանքային անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ատամնատեխնիկական նյութերի դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում ատամնատեխնիկական նյութերի ծախսման չափերը, 3) ճիշտ է սահմանում ատամնատեխնիկական նյութերի հատկությունները՝ ֆիզիկական, քիմիական, մեխանիկական և տեխնոլոգիական, 4) ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնները տեխնիկական, դյուրավառ, դյուրահալ և պայթյունավտանգ նյութերի հետ աշխատելու ժամանակ, 5) ճիշտ է ներկայացնում ատամնատեխնիկական աշխատատեղի սարքավորումների, գործիքների, դրոշմների, պատրաստի ատամնատեխնիկական կոնստրուկցիաների սանիտարահիգիենիկ և ինֆեկցիոն անվտանգության ապահովման մեթոդները, 6) ճիշտ է ներկայացնում ասեպտիկական և անտիսեպտիկական, 7) ճիշտ է ներկայացնում ատամնատեխնիկ աշխատատեղի ճիշտ կառուցվածքը՝ հաշվի առնելով աշխատանքային անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները նյութերի դասակարգման, ֆիզիկական, քիմիական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկությունների, ասեպտիկայի, անտիսեպտիկայի, ատամնատեխնիկական աշխատատեղի կառուցվածքի վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի ճիշտ ընտրել նյութերը և դրանց ծախսման չափերը՝ ըստ համապատասխան հանձնարարականի, տարբերակել ատամնատեխնիկական աշխատատեղի սարքավորումները, գործիքները, դրոշմները և դրանց մշակումը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ատամնատեխնիկական նյութերի դասակարգումը, - ատամնատեխնիկական նյութերի ծախսման չափերը, - ատամնատեխնիկական նյութերի հատկությունները՝ ֆիզիկական, քիմիական, մեխանիկական և

	<p>տեխնոլոգիական,</p> <ul style="list-style-type: none"> - տեխնիկական, դյուրավառ, դյուրահալ և պայթյունավտանգ նյութերի հետ աշխատելու ժամանակ անվտանգության կանոնները, - ատամնատեխնիկական աշխատատեղի սարքավորումների, գործիքների, դրոշմների, պատրաստի ատամնատեխնիկական կոնստրուկցիաների սանիտարահիգիենիկ և ինֆեկցիոն անվտանգության ապահովման մեթոդները, - ասեպտիկան և անտիսեպտիկան, - ատամնատեխնիկի աշխատատեղի ճիշտ կառուցվածքը՝ հաշվի առնելով աշխատանքային անվտանգության կանոնները: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, գրականություն ատամնատեխնիկական աշխատատեղի, աշխատանքային, սանիտարահիգիենիկ և ինֆեկցիոն անվտանգության պահպանման վերաբերյալ, ատամնատեխնիկական սարքավորումներ, գործիքներ, նյութեր, դրոշմներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել դրոշմանյութերի տեսակները, դասակարգումը, նրանց ներկայացվող պահանջները և կիրառությունը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում դրոշմանյութերի տեսակները և դրոշմանյութերին ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում կարծր բյուրեղացվող դրոշմանյութերը և դրանց կիրառումը, գիպսի տեսակները, ներկայացվող պահանջները, կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում ալգինատային դրոշմանյութերը և դրանց կիրառումը, 4) ճիշտ է ներկայացնում սիլիկոնային դրոշմանյութերը և դրանց կիրառումը, 5) ճիշտ է ներկայացնում թիոկոլային դրոշմանյութերը և դրանց կիրառումը, 6) ճիշտ է ներկայացնում թերմոպլաստիկ դրոշմանյութերը և դրանց կիրառումը:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները դրոշմանյութերի, դրանց տեսակների, ներկայացվող պահանջների, կիրառման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի տարբերակել գիպսի տեսակները՝ ըստ կարծրության, շաղախել գիպսը և ներկայացնել գիպսի կարծրության վրա ազդող գործոնները, գիպսի պահպանման եղանակները՝ ըստ միջավայրի, Վենի դիագրամի միջոցով տարբերակել ալգինատային և սիլիկոնային դրոշմանյութերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - դրոշմանյութերի տեսակները և դրոշմանյութերին ներկայացվող պահանջները, - կարծր բյուրեղացվող դրոշմանյութերը և դրանց կիրառումը, գիպսի տեսակները, ներկայացվող պահանջները, կիրառումը, - ալգինատային դրոշմանյութերը և դրանց կիրառումը, - սիլիկոնային դրոշմանյութերը և դրանց կիրառումը, - թիոկոլային դրոշմանյութերը և դրանց կիրառումը, - թերմոպլաստիկ դրոշմանյութերը և դրանց կիրառումը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ուսումնառության նյութ, հարցաշար, ատամնատեխնիկական նյութագիտության վերաբերյալ անհրաժեշտ գրականություն, գիպս, սուպերգիպս, էլաստիկ դրոշմանյութեր, ռետինե շաղախման բաժակ, շաղախման շպատել /բահիկ/:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել դրոշմը, դրոշմագոյալը, մոդելը, դրանց տեսակները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում դրոշմը և դրա տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում դրոշմագոյալների տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում մոդելը և դրա տեսակները:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները դրոշմի, դրա տեսակների, դրոշմագրայի, մոդելի ու դրա տեսակների վերաբերյալ: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի տրված դրոշմից ստանալ մոդել, տարբերակել վերին և ստորին դրոշմագրայինները, աշխատանքային, օժանդակ մոդելները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - դրոշմը և դրա տեսակները, - դրոշմագրայինների տեսակները, - մոդելը և դրա տեսակները: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ուսումնառության նյութ, հարցաշար, դրոշմ, դրոշմագրայ, գիպս, սուպերգիպս, ռետինե շաղախման բաժակ, շաղախման շպատել /բահիկ/:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ներկայացնել օժանդակ նյութերը, տեսակները, հատկությունները, կիրառումը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մոմերի դասարակարգումը՝ ըստ ծագման, 2) ճիշտ է ներկայացնում ատամնատեխնիկական մոմերը և կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում կաղապարանյութերը, դրանց ներկայացվող պահանջները, կիրառումը, 4) ճիշտ է ներկայացնում բնական և արհեստական հղկանյութերը, փայլեցնող նյութերը և դրանց կիրառումը, 5) ճիշտ է ներկայացնում լրացուցիչ նյութերը՝ ծածկանյութերը, քողարկող նյութերը, գելինը, տեխնիկական սիլիկոնը և դրանց կիրառումը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարության միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մոմերի դասակարգման, ատամնատեխնիկական մոմերի կիրառման, կաղապարանյութերին ներկայացվող պահանջների, կիրառման, բնական և արհեստական հղկանյութերի, փայլեցնող նյութերի, հղկող գործիքների վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի</p>

	<p>տարբերակել ատամնատեխնիկական մոմերը, հղկող գործիքները, հղկանյութերը, փայլեցնող նյութերը, ծածկանյութերը, քողարկող նյութերը, գելինը և տեխնիկական սիլիկոնը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ըստ ծագման մոմերի դասարակարգումը, - ատամնատեխնիկական մոմերը և կիրառումը, - կաղապարանյութերը, դրանց ներկայացվող պահանջները, կիրառումը, - բնական և արհեստական հղկանյութերը, փայլեցնող նյութերը, և դրանց կիրառումը, - լրացուցիչ նյութերը՝ ծածկանյութերը, քողարկող նյութերը, գելինը, տեխնիկական սիլիկոնը և դրանց կիրառումը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, ատամնատեխնիկական մոմեր, կաղապարանյութեր, հղկանյութեր, հղկող գործիքներ, փայլեցնող նյութեր, ծածկանյութեր, քողարկող նյութեր, գելին, տեխնիկական սիլիկոն, այլ լրացուցիչ նյութեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Ներկայացնել պլաստմասաները, տեսակները, կիրառումը, դրանց ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պլաստմասաների տեսակները՝ ջերմակարծրացող, ինքնակարծրացող, լուսակարծրացող, և դրանց կիրառումը, 2) ճիշտ է ներկայացնում պլաստմասայի շաղախումը, հասունացման փուլերը, 3) ճիշտ է ներկայացնում ծակոտկենությունը, առաջացման պատճառները, 4) ճիշտ է ներկայացնում պոլիմերիզացիայի ռեժիմը, դրա խախտման հետևանքները, 5) ճիշտ է ներկայացնում պլաստմասայի ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա, 6) ճիշտ է ներկայացնում արհեստական ատամները, տեսակները, ներկայացվող պահանջները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները պլաստմասաների տեսակների, բերանի խոռոչի հյուսվածքների վրա դրանց ազդեցության, կիրառման, հասունացման փուլերի, ծակոտկենության առաջացման</p>

	<p>պատճառների, արհեստական ատամների վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի տարբերակել պլաստմասաները, շաղախել և ցույց տալ հասունացման փուլերը, տարբերակել պլաստմասե և ճենապակե ատամները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - պլաստմասաների տեսակները՝ ջերմակարծրացող, ինքնակարծրացող, լուսակարծրացող, և դրանց կիրառումը, - պլաստմասայի շաղախումը, հասունացման փուլերը, - ծակոտկենությունը, առաջացման պատճառները, - պոլիմերիզացիայի ռեժիմը, դրա խախտման հետևանքները, - պլաստմասայի ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա, - արհեստական ատամները, տեսակները, ներկայացվող պահանջները: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, արհեստական ատամներ, ապակե բաժակ, շպատել :
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել մետաղական համաձուլվածքները, տեսակները, դրանց ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա: Ճենապակու (կերամիկայի) տեսակները, կիրառումը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մետաղական համաձուլվածքի տեսակները, կառուցվածքային առանձնահատկություններն ու ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա, գալվանիզացիայի երևույթը, 2) ճիշտ է ներկայացնում չժանգոտվող պողպատը, կոբալտ-քրոմային և նիկել-քրոմային համաձուլվածքները, դրանց բաղադրությունը, կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում ազնիվ մետաղների համաձուլվածքները, հարգը, կիրառումը, 4) ճիշտ է ներկայացնում ճենապակու (կերամիկայի) տեսակները, բաղադրությունը և կիրառումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մետաղական համաձուլվածքի տեսակների, չժանգոտվող

	<p>պողպատի, կոբալտ-քրոմային, նիկել-քրոմային, ազնիվ մետաղների համաձուլվածքների, գալվանիզացիայի և գալվանոպլաստիկայի երևույթների, ճենապակու (կերամիկայի) մասին: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի նշել ոսկու հարգերը և կիրառումը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - մետաղական համաձուլվածքի տեսակները, կառուցվածքային առանձնահատկություններն ու ազդեցությունը բերանի խոռոչի հյուսվածքների վրա, գալվանիզացիայի երևույթը, - չժանգոտվող պողպատը, կոբալտ-քրոմային և նիկել-քրոմային համաձուլվածքները, դրանց բաղադրությունը, կիրառումը, - ազնիվ մետաղների համաձուլվածքները, հարգը, կիրառումը, - ճենապակու (կերամիկայի) տեսակները, բաղադրությունը և կիրառումը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, մասնագիտական գրականություն, մետաղական համաձուլվածքների, կերամիկայի վերաբերյալ տեսանյութ, համակարգիչ և տեսացրիչ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p>Մ Ո Դ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Ա Տ Ա Մ Ն Ե Ր Ի Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Ա Ն Ա Տ Ո Մ Ի Ա, Ֆ Ր Ո Ն Տ Ա Լ Ա Տ Ա Մ Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ն Ա Վ ՈՐ Ա Ն Ա Տ Ո Մ Ի Ա»</p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ԱՏԽ-5-20-004</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ ատամների ընդհանուր անատոմիայի, նրանց փոխադարձ կապի և նշանակության, ֆրոնտալ ատամների մասնավոր անատոմիայի մասին և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 64 ժամ</p>
<p>Մուտքային պահանջները</p>	<p>Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱՏԽ-5-20-001 «Մարդու</p>

	ընդհանուր անատոմիա և ֆիզիոլոգիա» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ատամների ընդհանուր անատոմիան, 2) ներկայացնի կտրիչների մասնավոր անատոմիան, 3) ներկայացնի ժանիքների մասնավոր անատոմիան:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ատամների ընդհանուր անատոմիան
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ատամների ընդհանուր անատոմիան, խմբային պատկանելիությունը, 2) ճիշտ է կարգում ատամնաշարի բանաձևերը, 3) ճիշտ է ներկայացնում ատամների մակերեսները, աջ ու ձախ ատամների տարբերիչ նշանները, 4) ճիշտ է ներկայացնում ատամների հյուսվածքները՝ էմալ, դենտին, ցեմենտ, կակղան, 5) ճիշտ է ներկայացնում պերիոդոնտն ու պարոդոնտը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները ատամների ընդհանուր անատոմիայի, մակերեսների, հյուսվածքների, պերիոդոնտի ու պարոդոնտի վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի մուլյաժի վրա ցույց տալ ատամների մասերը, մակերեսները, հյուսվածքները, պերիոդոնտն ու պարոդոնտը, տարբերել աջ ու ձախ ատամները, պաստառի վրա ցույց տալ պերիոդոնտն ու պարոդոնտը, որոշել ատամի խմբային պատկանելիությունը, կարդալ և գրել ատամնաշարի բանաձևերը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> - ատամների ընդհանուր անատոմիան, խմբային պատկանելիությունը, - ատամնաշարի բանաձևերը, - ատամների մակերեսները, աջ ու ձախ ատամների տարբերիչ նշանները, - ատամների հյուսվածքները՝ էմալ, դենտին, ցեմենտ, կակղան, - պերիոդոնտն ու պարոդոնտը:

	Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, ատամի մուլյաժներ, պաստառներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կտրիչների մասնավոր անատոմիան
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վերին կենտրոնական կտրիչը, 2) ճիշտ է ներկայացնում վերին կողմնային կտրիչը, 3) ճիշտ է ներկայացնում ստորին կենտրոնական կտրիչը, 4) ճիշտ է ներկայացնում ստորին կողմնային կտրիչը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները վերին և ստորին կտրիչների մասին: Գործնական աշխատանքով ուսանողին կհանձնարարվի Վենի դիագրամի միջոցով ներկայացնել կտրիչների նմանություններն ու տարբերությունները, գիպսով, մոմով կամ այլ նյութով ձևավորել վերին կենտրոնական կտրիչը, վերին կողմնային կտրիչը, ստորին կենտրոնական կտրիչը, ստորին կողմնային կտրիչը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ - վերին կենտրոնական և կողմնային կտրիչ, - ստորին կենտրոնական և կողմնային կտրիչ: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, կտրիչ ատամների մուլյաժներ, գիպս, մոմ, անհրաժեշտ գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ժանիքների մասնավոր անատոմիան

Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում վերին ժանիքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ստորին ժանիքը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները վերին և ստորին ժանիքների մասին: Գործնական աշխատանքով ուսանողին կհանձնարարվի Վենի դիագրամի միջոցով ներկայացնել ժանիքների նմանություններն ու տարբերությունները, գիպտով, մոմով կամ այլ նյութով ձևավորել վերին ժանիքը և ստորին ժանիքը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - վերին ժանիք, - ստորին ժանիք: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, ժանիք ատամների մոլյաժներ, գիպս, մոմ, անհրաժեշտ գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 24 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՂՄՆԱՅԻՆ ԱՏԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆԱՏՈՄԻԱ: ԿԾՎԱԾՔ»	
Մոդուլի դասիչը	ԱՏԽ-5-20-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ փոքր և մեծ աղորիքների մասնավոր անատոմիայի, ատամնաշարի, օկլյուզիայի և կծվածքի մասին և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	<p>72 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 62 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱՏԽ-5-20-004 «Ատամների ընդհանուր անատոմիա, ֆրոնտալ ատամների մասնավոր անատոմիա» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի փոքր աղորիքների մասնավոր անատոմիան, 2) ներկայացնի մեծ աղորիքների մասնավոր անատոմիան, 3) ներկայացնի ատամնաշարը, օկյուզիան և կծվածքը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել փոքր աղորիքների մասնավոր անատոմիան
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վերին առաջին փոքր աղորիքը, 2) ճիշտ է ներկայացնում վերին երկրորդ փոքր աղորիքը, 3) ճիշտ է ներկայացնում ստորին առաջին փոքր աղորիքը, 4) ճիշտ է ներկայացնում ստորին երկրորդ փոքր աղորիքը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները վերին և ստորին փոքր աղորիքների վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի Վենի դիագրամի միջոցով ներկայացնել փոքր աղորիքների նմանություններն ու տարբերությունները, գիպսով, մոմով կամ այլ նյութով ձևավորել վերին առաջին փոքր աղորիքը, վերին երկրորդ փոքր աղորիքը, ստորին առաջին փոքր աղորիքը, ստորին երկրորդ փոքր աղորիքը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ - վերին առաջին փոքր աղորիքը, - վերին երկրորդ փոքր աղորիքը, - ստորին առաջին փոքր աղորիքը, - ստորին երկրորդ փոքր աղորիքը: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, փոքր աղորիքների մուլյաժներ, գիպս, մոմ, անհրաժեշտ գործիքներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 24 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մեծ աղորիքների մասնավոր անատոմիան
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում վերին առաջին մեծ աղորիքը, 2) ճիշտ է ներկայացնում վերին երկրորդ մեծ աղորիքը, 3) ճիշտ է ներկայացնում ստորին առաջին մեծ աղորիքը, 4) ճիշտ է ներկայացնում ստորին երկրորդ մեծ աղորիքը, 5) ճիշտ է ներկայացնում վերին և ստորին երրորդ մեծ աղորիքները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները վերին և ստորին մեծ աղորիքների մասին: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի գրաֆոլոգիական աղյուսակի միջոցով ներկայացնել մեծ աղորիքների առանձնահատկությունները, գիպսով, մոմով կամ այլ նյութով ձևավորել վերին առաջին մեծ աղորիքը, վերին երկրորդ մեծ աղորիքը, ստորին առաջին մեծ աղորիքը, ստորին երկրորդ մեծ աղորիքը, վերին և ստորին երրորդ մեծ աղորիքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - վերին առաջին մեծ աղորիքը, - վերին երկրորդ մեծ աղորիքը, - ստորին առաջին մեծ աղորիքը, - ստորին երկրորդ մեծ աղորիքը, - վերին և ստորին երրորդ մեծ աղորիքները: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, մեծ աղորիքների մուլյաժներ, գիպս, մոմ, անհրաժեշտ գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ատամնաշարը, օկյուզիան և կծվածքը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ատամնաշարի մակերեսները, ատամնաշարի աղեղները,

	<p>2) ճիշտ է սահմանում օկյուզիան, տեսակները,</p> <p>3) ճիշտ է սահմանում կծվածքը, տեսակները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ֆիզիոլոգիական կծվածքը, տեսակները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում ախտաբանական կծվածքը, տեսակները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները ատամնաշարի, օկյուզիայի և կծվածքի մասին: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի մուլյաժի վրա ներկայացնել ատամնաշարի մակերեսները, ատամնաշարի աղեղները, օկյուզիան, տեսակները, կծվածքը, տեսակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ատամնաշարի մակերեսները, ատամնաշարի աղեղները, - օկյուզիայի սահմանում, տեսակները, - կծվածքի սահմանում, տեսակները: - ֆիզիոլոգիական կծվածքը, տեսակները, - ախտաբանական կծվածքը, տեսակները: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ուսումնառության նյութ, հարցաշար, տեսագրիչ, համակարգիչ, մասնագիտական կարճ տեսանյութեր, ատամնաշարերի մուլյաժ, պաստառ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՄԲԻՆԱՑՎԱԾ ՄՈԴԵԼ, ՄՈՄԵ ԹԱՍԱԿ, ՁՈՒԼՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՏԽ-5-20-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կոմբինացված մոդելի և մոմե թասակների պատրաստման, ձուլման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ որից՝

	տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱՏԽ-5-20-003 «Ատամնատեխնիկական նյութագիտություն» և ԱՏԽ-5-20-005 «Կողմնային ատամների մասնավոր անատոմիա: Կծվածք» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի դրոշմի գնահատումը, կոմբինացված մոդելների պատրաստման տեխնիկան, 2) ներկայացնի մոմե թասակների պատրաստման տեխնիկան, 3) ներկայացնի մոմե կոնստրուկցիայի փոխարինումը մետաղական կոնստրուկցիայի:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դրոշմի գնահատումը, կոմբինացված մոդելների պատրաստման տեխնիկան
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դրոշմի գնահատումը, 2) կարողանում է ճիշտ ընտրել համապատասխան նյութերը /գիպս, սուպերգիպս/, 3) ճիշտ է ներկայացնում կոմբինացված մոդելի պատրաստման տեխնիկան՝ անշտիֆտ մեթոդով, 4) ճիշտ է ներկայացնում կոմբինացված մոդելի պատրաստման տեխնիկան՝ շտիֆտային մեթոդով, 5) ճիշտ է ներկայացնում կոմբինացված մոդելի պատրաստման տեխնիկան՝ պինդեքս համակարգով:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները դրոշմի գնահատման, կոմբինացված մոդելների պատրաստման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան նյութերը և հանձնարարված եղանակով պատրաստել կոմբինացված մոդել:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - դրոշմի գնահատումը, - համապատասխան նյութերի /գիպս, սուպերգիպս /, - անշտիֆտ մեթոդով կոմբինացված մոդելի պատրաստման տեխնիկան, - շտիֆտային մեթոդով կոմբինացված մոդելի պատրաստման տեխնիկան, - պինդեքս համակարգով կոմբինացված մոդելի պատրաստման տեխնիկան: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նյութեր, գործիքներ և սարքավորումներ, ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսացրիչ, տեսանյութ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել մոմե թասակների պատրաստման տեխնիկան</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ նյութեր է ընտրում աշխատանքի կազմակերպման համար, 2) ճիշտ է պատրաստում մոմե թասակը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մոմե թասակների պատրաստման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան նյութերը, գործիքները, սարքավորումները և պատրաստել մոմե թասակ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p>

	<ul style="list-style-type: none"> - աշխատանքի կազմակերպման համար նյութերի ընտրումը, - մոմե թասակների պատրաստումը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նյութեր, գործիքներ, սարքավորումներ, ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսացրիչ, տեսանյութ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մոմե կոնստրուկցիայի փոխարինումը մետաղական կոնստրուկցիայի
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում ռետենցիոն գնդիկների տեղադրումը մոմե թասակի մակերեսին, 2) ճիշտ է ներկայացնում ձուլման գործընթացը, 3) ճիշտ է ներկայացնում ձուլվածքի մշակումը ավազաշիթային և ջրաշիթային սարքերի միջոցով:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները մոմե կոնստրուկցիան մետաղի փոխարինման, ձուլվածքի մշակման վերաբերյալ: Գործնական առաջադրանքով ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան նյութերը, գործիքները և սարքերը, տեղադրել ռետենցիոն գնդիկները մոմե թասակների մակերեսին, ներկայացնել մոմի փոխարինումը մետաղի և կատարել մշակում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ռետենցիոն գնդիկների տեղադրում մոմե թասակի մակերեսին, - ձուլում և ձուլվածքի մշակում: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարել հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նյութեր, գործիքներ և սարքավորումներ, ուսումնառության նյութ, հարցաշար, համակարգիչ, տեսացրիչ, տեսանյութ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 6 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՆՇԱՐԺ ՊՐՈԹԵԶՆԵՐ, ՆԵՐԴԻՐ, ԾԱՅՐԱՏԱՅԻՆ ԳԱՄԻԿԱՎՈՐ ՆԵՐԴԻՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՏԽ-5-20-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ անշարժ պրոթեզների տեսակների մասին, ձևավորել ներդիրների և ծայրատային գամիկավոր ներդիրների պատրաստման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 64 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱՏԽ-5-20-006 «Կոմբինացված մոդել, մոմե թասակ, ձուլում» մոդուլը:
